

Արձանագրություն №3/2016-2017

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2016թ. դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 61-ը (վաթսունմեկը): Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Հաղորդում ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին** (զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):
2. **Հաղորդում ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ծրագրի 2015-2016 ուստարվա համալիր միջոցառումների կատարման արդյունքների մասին** (զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):
3. **Հաղորդում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին** (զեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):
4. **Հաղորդում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին** (զեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):
5. **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2015-2016 ուստարվա գործունեության մասին** (զեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան):
6. **Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը հաստատելու մասին** (զեկ. պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյան):
7. **ԵՊՀ-ում ֆարմացիայի ինստիտուտ ստեղծելու և դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություններ կատարելու միջնորդությամբ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի առջև հանդես գալու մասին** (զեկ. դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան Տ. Վ. Ղոչիկյան, ֆարմքիմայի և ֆարմակազնոզիայի ամբիոնի վարիչ Ա. Ս. Սադյան):
8. **ԵՊՀ մամուլի պատմության և տեսության և ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոններն անվանափոխելու մասին** (զեկ. ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Ն. Մարտիրոսյան):

9. ԵՊՀ սահմանադրական տնտեսագիտության կենտրոնի կանոնադրությունը

հաստատելու մասին: (զեկ. տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ.Լ. Սարգսյան):

10. Ընթացիկ հարցեր.

10.1 Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողներ

Ալբերտ Սահակյանին, Հրայր Հարությունյանին, Տիգրան Մամիկոնյանին և

ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Արմեն

Անդրեասյանին պարգևատրելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց օրակարգի հարցերի հերթականության փոփոխություն՝ առաջինը իրականացնել պարգևատրման արարողությունը: Ա. Սիմոնյանը հայտնեց, որ 2016թ. դեկտեմբերի 5-ին տեղի է ունեցել ծրագրավորման ուսանողական թիմերի միջազգային հեղինակավոր ACM ICPC օլիմպիադայի կիսաեզրափակիչը: ԵՊՀ թիմն արժանագրել է բացառիկ արդյունքներ և անցել եզրափակիչ՝ առաջին անգամ ՀՀ բուհերի մեջ: Եզրափակիչը կայանալու է 2017թ. մայիսին ԱՄՆ-ում: Թիմի երեք անդամները՝ ԻԿՄ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Սահակյանը և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Հրայր Հարությունյանը և Տիգրան Մամիկոնյանը, ինչպես նաև թիմի մարզիչ, ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Արմեն Անդրեասյանը խրախուսվում են 50.000-ական դրամով: Ալբերտ Սահակյանն արդեն ունի ԵՊՀ ոսկե մեդալ՝ անցած ամռանը մաթեմատիկայի գծով միջազգային օլիմպիադայում 1-ին տեղը գրավելու համար, ուստի նա, մեդալի փոխարեն, պարգևատրվում է շնորհակալագրով: Իսկ Հրայր Հարությունյանը, Տիգրան Մամիկոնյանը և դասախոս Արմեն Անդրեասյանը պարգևատրվում են ԵՊՀ ոսկե մեդալներով: Ողջույնի և շնորհավորական խոսքով հանդես եկավ ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը: Նա, մասնավորապես, նշեց, որ կիսաեզրափակիչ փուլին մասնակցել են աշխարհի 2700 համալսարաններ՝ 40.000 ուսանողներով, և եզրափակիչ են անցել ընդամենը 40 համալսարանների թիմեր, որոնցից մեկը ԵՊՀ-ն է: Եզրափակիչ անցած թիմերը ներկայացնող համալսարաններից են, օրինակ՝ Մոսկվայի պետական համալսարանը, Հարվարդի համալսարանը, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը և այլ հեղինակավոր բուհեր: Ներկաները ևս շնորհավորեցին և ծափահարեցին ԵՊՀ օլիմպիական թիմի անդամներին:

1. Լսեցին. – Հաղորդում ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին:Ռեկտոր Ա. Սիմոնյանը ընդհանուր գծերով ներկայացրեց ԵՊՀ 2016-2020 թթ. Ջարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի՝ 2015-2016ուստարվա 2-րդ կիսամյակում նախատեսված խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և

միջոցառումների կատարողականով: Ռեկտորի հաղորդումը գերազանցապես կենտրոնացավ ռազմավարական առաջին նպատակի՝ «որակյալ կրթության» խնդիրների լուծմանը տանող գործողությունների կատարողականին: Ա. Սիմոնյանն առավել հանգամանալից կանգ առավ դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավման հետ կապված գործողությունների կատարողականին: Նա հայտնեց, որ ծավալուն այս զեկույցը, որ ընդգրկում է 58 էջ, հնարավոր չէ մանրամասն անդրադառնալ կատարված յուրաքանչյուր գործողության: Զեկույցը նախապես տրամադրված է եղել գիտխորհրդի անդամներին:

Հարցեր չհնչեցին, ելույթներ, առաջարկություններ չեղան:

Որոշեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Լսեցին. - Հաղորդում ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ծրագրի 2015-2016 ուստարվա համալիր միջոցառումների կատարման արդյունքների մասին:

Ռեկտոր Ա. Սիմոնյանն իր հաղորդման մեջ մասնավորապես նշեց, որ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ծրագրի միջոցառումները համակարգող հանձնաժողովի՝ նշված ժամանակահատվածի գործունեության առաջնահերթություններն են եղել համալսարանական տարաբնույթ գործընթացներին ԵՊՀ աշխատակիցների և սովորողների իրազեկվածության բարձրացումն ու մասնակցության ընդլայնումը: Իրազեկվածության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ են կազմակերպվել՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, միջազգային կազմակերպությունների, այդ թվում Եվրոպայի խորհրդի մասնակցությամբ ու աջակցությամբ: Աշխատանքներ են տարվել բարեվարքության, ակադեմիական ազնվության կանոնների առաջավոր փորձի մասին իրազեկման ուղղությամբ: Ա. Սիմոնյանը նշեց, որ անելիքներ, իհարկե դեռ շատ կան:

Հարցեր չհնչեցին, ելույթներ, առաջարկություններ չեղան:

Որոշեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. Լսեցին. – Հաղորդում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը առաջարկեց հանգամանալից կանգ չառնել բյուջեի կատարողականի բոլոր տողերին, այլ հակիրճ և ընդհանուր գծերով ներկայացնել առավել կարևոր փաստերն ու տվյալները: Առաջարկն ընդունվեց: Ըստ այդմ շեշտվեց, որ 2015թ. համեմատ 2016թ.-ին համալսարանի ծախսերը մեծացել են, ինչը հիմնականում կապված էր մարզահամալիրի վերակառուցման հետ: Թվերով ներկայացվեց հյուրատան վաճառքից ստացված եկամուտը՝ մոտ 2 մլրդ դրամ, այդ եկամտից մուծված հարկերը՝ մոտ 715 մլն դրամ: Մնացած գումարի գերակշիռ մասը ծախսվել է մարզահամալիրի վերակառուցման, նոր հյուրատան կառուցման, ԵՊՀ որոշ մասնաշենքերի սալկապատման, բակային տարածքի բարեկարգման և այլնի վրա: Շտկվել են կոմունիկացիաները, վերակառուցվել կոյուղիները: Մարզահամալիրում ֆիզդաստիարակության դասերին 300 ուսանող այժմ հնարավորություն ունեն միաժամանակ օգտվելու ցնցուղից: 11 ամսվա կատարողականն իրականացված է 94 տոկոսով: Եղել են նաև չնախատեսված ծախսեր, որոնց մեծ մասը վերաբերում է ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ ռազմաճակատին ԵՊՀ-ի տրամադրած ֆինանսական աջակցությանը, ինչպես նաև այդ պատերազմի ժամանակ

զոհված երկու տասնյակից ավելի զինծառայողների անչափահաս երեխաներին մինչև չափահաս դառնալը ամենամսյա կայուն դրամական աջակցություններին:

Հարցեր չհչեցին:

Որոշեցին. – 2016թ. հունվար-նոյեմբեր ամիսների ԵՊՀ ծախսերի կատարողականն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. – Հաղորդում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը, ի մասնավորի, նշեց, որ 2017թթ. բյուջեն հավասարակշռված է: Նախորդ ֆինանսական տարվա համեմատ մուտքերը պակասում են 928 մլն դրամով (նախորդ տարի վաճառվել էր հյուրատունը և եկամուտների ավելացումը դրանով էր պայմանավորված): Սպասվում է ընդունելության նվազում: Նվազում են նաև միջազգային դրամաշնորհները, ինչն օբյեկտիվ միտում է: Ծախսերի մեջ աշխատավարձերին ուղղված ծախսերը կազմելու են 66 տոկոս, ինչը 2 տոկոսով ավելին է նախորդ տարվանից: 115 մլն դրամ տրամադրվելու է կուտակային ֆոնդի ծախսերը վճարելու համար: 12 մլն դրամ նախատեսված է ԵՊՀ հաշմանդամություն ունեցող աշխատակիցների կարիքների համար: 125 մլն դրամ ԵՊՀ-ն վճարելու է առողջական ապահովագրության համար՝ յուրաքանչյուր աշխատակցի համար 52.000 դրամի չափով: 20 մլն դրամ պահվում է ֆորսմաժորային իրավիճակների կառավարման համար:

Արտահայտվեցին. – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը հետաքրքրվեց, թե բյուջեով ԵՊՀ Դիլիջանի մարզա-առողջարանային համալիրի վերակառուցման համար միջոցներ նախատեսվա՞ծ են: Ա. Սիմոնյանը պատասխանեց, որ նախկինում հյուրատան վաճառքից ակնկալվում էր միջոցներ տրամադրել նշված խնդրին, սակայն հարկերը սպասվածից շատ ավելին եղան: Եկամտի որոշ սպասելիքներ կան, սակայն պետք է ընտրություն կատարել ԵՊՀ հանրակացարանը և Բլդան չայը հիմնակառուցելու տարբերակների մեջ:

Որոշեցին.– ԵՊՀ 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. Լսեցին. – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2015-2016 ուստարվա գործունեության մասին: Մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը նշեց, որ հաշվետվությունը նախապես առաքված է գիտխորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Բանախոսը նկատեց, որ հաշվետու ուստարին առանձնանում է մասնաճյուղի զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ավարտով և նոր՝ 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատումով, որը կազմվել է ԵՊՀ ծրագրի հիման վրա: Ս. Առաքելյանը նշեց, որ արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը: Հաշվի առնելով մարզում տարրական դասարանների ուսուցիչների մեծ պահանջարկը՝ մասնաճյուղը հաշվետու ուստարում իրականացրել է նաև «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով ընդունելություն, իսկ 2017-18 ուստարում կիրականացվի ընդունելություն նաև «Սոցիալական աշխատանք», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերով՝ ընդլայնելով դիմորդների մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները: Դիմորդների հոսքը մեծացնելու նպատակով և ըստ այդմ գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու

նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների տրամադրվել են ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը, մասնաճյուղի, կիրառական արվեստի ֆակուլտետի և հեռակա ուսուցման բաժնի գովազդային բուկլետները նաև վրացերեն և պարսկերեն լեզուներով: Մասնաճյուղի գովազդարշավին և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը էապես նպաստում է նաև մասնաճյուղի կայքէջը, որի «դիմորդ» բաժնում առկա է անհրաժեշտ տեղեկատվություն իրականացվող կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացների մասին : Ֆրանսիայի Լիոն քաղաքի «AYO» կազմակերպության հովանավորությամբ մասնաճյուղում ստեղծվել է ֆրանսերեն լեզվի կենտրոն՝ հազեցած ժամանակակից տեխնիկական միջոցներով, շուրջ 800 կտոր մասնագիտական գրականությամբ (մեթոդական և գեղարվեստական), որը հնարավորություն է տալիս ֆրանսերեն լեզվի դասերը վարելու ժամանակակից տեսա-ձայնային մեթոդներով: 2016թ. փետրվարից «Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ» դասընթացը մասնաճյուղում իրականացվում է առցանց եղանակով, նախատեսվել է 01.02.2017-ից ԵՊՀ-ի հետ համատեղ առցանց եղանակով իրագործել ևս մեկ դասընթաց: Պլանավորվել է պարբերաբար ավելացնել առցանց իրականացվող դասընթացների քանակը, և մասնաճյուղն այդ գործընթացի իրականացման համար ակնկալում է ԵՊՀ-ի աջակցությունը:

Մասնաճյուղի հաշվետվությունն ամբողջությամբ հասանելի է այսօրեղ՝ <http://documentation.yso.am/wp-content/uploads/2017/02/hashvetvutyun.pdf> :

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանը նկատեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իսկապես ռազմավարական նշանակություն ունեցող կրթական հաստատություն է, քանզի այն ոչ միայն կրթական, այլև տնտեսական ու ժողովրդագրական կարևոր խնդիր է լուծում սահմանամերձ Տավուշի մարզում, իսկ մասնաճյուղի ղեկավարությունը, տնօրենի գլխավորությամբ գրագետ ու արդյունավետ գործունեություն են իրականացնում: Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը հայտնեց, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների աջակցության» հիմնադրամը պատրաստակամ է Իջևանի մասնաճյուղի չորս առավել անապահով և ուսման մեջ առաջադիմող ուսանողների վարձը վճարելու հարցում: Ս. Առաքելյանը շնորհակալություն հայտնեց գործընկերոջը՝ նման առաջարկության համար:

Որոշեցին. – Հավանություն տալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2013-2014 ուստարվա գործունեությանը:

6. Լսեցին. – **Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը հաստատելու մասին:** Պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը նշեց, որ 2014թ. փետրվարից, եր չէ կառավարության կողմից հաստատվեց մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը, առաջացավ խնդիր՝ ոչ մանկավարժական կրթական հաստատություններում շրջանավարտներին մանկավարժի որակավորում տալու հետ: Հետագա բանակցությունների արդյունքում հնարավոր դարձավ, որ ոչ մանկավարժական հաստատությունները շրջանավարտներին կարող են շնորհել մանկավարժի որակավորում այն դեպքում, երբ անհրաժեշտ ծավալով և կրեդիտատարությամբ մանկավարժական կրթական դասընթացներ կանցնեն և կլրացնեն սահմանված կրեդիտները: Ըստ այդմ մանկավարժի որակավորում ստացող ուսանողների համար նախատեսվում է 30 կրեդիտ ծավալով մանկավարժական լրացուցիչ կրթաբլոկ, որը ներառում է 6 մոդուլ՝ իր կրթական, հետազոտական, մանկավարժական պրակտիկայի և ամփոփիչ ավարտական քննության բաղադրիչներով: Ա. Գրիգորյանը

հանգամանալից ներկայացրեց մանկավարժական կրթաբլոկի կառուցվածքն ու կազմակերպումը, այդ կրթաբլոկի դասախոսական համակզմին ներկայացվող պահանջները:

Արտահայտվեցին. – Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա. Սահակյանը հարցրեց, թե հնարավո՞ր է, որ մանկավարժական կրթաբլոկի ուսումնառության համար ուսանողները դիմում ներկայացնեն 2-րդ կուրսում: Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ կանոնակարգով դիմումի ժամկետը նախատեսված է ուսումնառության առաջին կուրսի երկրորդ կիսամյակում, սակայն կարող են լինել նաև բացառություններ՝ համապատասխան հիմնավոր պատճառների առկայության դեպքում: Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի սովորող Ա. Բագրատունյանը հետաքրքրվեց, թե կանոնակարգի դրույթները տարածվո՞ւմ են նախկին ուստարիներին բակալավրիատ ընդունված ուսանողների վրա: Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ կանոնակարգը վերաբերում է միայն ընթացիկ ուստարում ընդունված և հաջորդ ուստարիներին ընդունվող ուսանողներին: Ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել կանոնակարգը: Քվեարկությունն անցավ միաձայն (կողմ):

Որոշեցին. – Հաստատել Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կանոնակարգը:

7. Լսեցին. – **ԵՊՀ–ում ֆարմացիայի ինստիտուտ ստեղծելու և դեղագիտության և քիմիայի ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություններ կատարելու միջնորդությամբ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի առջև հանդես գալու մասին:** 1/ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ Ա. Սադյանը նշեց, որ Համալսարանում ֆարմացիայի մասնագիտության վերջին շրջանում արձանագրված լուրջ զարգացումների արդյունքում դեղագիտության ամբիոնից առանձնացել են ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնը, ինչպես նաև ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնը: Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և ֆարմացիայի բաժնում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններից՝ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդն առաջարկում է դեղագիտության ամբիոնը վերանվանել «Կենսաբժշկության ամբիոն»:
2/ Հաջորդ հարցը վերաբերում է ֆարմացիայի մասնագիտության նշված երեք ամբիոնների և լաբորատորիաների բազայի վրա ԵՊՀ նոր ստորաբաժանման՝ ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտ ստեղծելուն: Ինստիտուտի հիմնական առաքելությունը լինելու է ֆարմացիայի բնագավառում որակյալ կրթական, գիտահետազոտական և ինովացիոն ծրագրերի իրականացումը: Ա. Սադյանը հանգամանալից կանգ առավ ինստիտուտի ստեղծման նախադրյալների վրա՝ շեշտելով ֆարմացիայի բաժնի ծավալած արդյունավետ միջազգային համագործակցությունը և բաժնում զարգացած ենթակառուցվածքի առկայությունը: 3/ Ա. Սիմոնյանը նշեց, որ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետից ֆարմացիայի բաժնի առանձնացումը և վերակազմակերպումը ինստիտուտի բերում է նաև ֆակուլտետի անվանափոխության հարցը:

Արտահայտվեցին. – Կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը նկատեց, որ դեղագիտության ամբիոնը «Կենսաբժշկության» ամբիոնի վերանվանումը լեզվական խնդիր է առաջացնում. Նա առաջարկեց վերանվանել «Կենսաբժշկագիտության ամբիոն»:
Առաջարկը ընդունելի համարվեց ներկաների կողմից: Վերոնշյալ երեք հարցերի վերաբերյալ անցկացվեց քվեարկություն: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին –

1. «Երևանի պետական համալսարանի դեղագիտության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Երևանի պետական համալսարանի կենսաբժշկագիտության ամբիոն»:

2. Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Երևանի պետական համալսարանում ստեղծելու «Ֆարմացիայի ինստիտուտ» կառուցվածքային ստորաբաժանումը: ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոն», «Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոն» և «Կենսաբժշկագիտության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները առանձնացման եղանակով վերակազմակերպել և ընդգրկել «Երևանի պետական համալսարանի ֆարմացիայի ինստիտուտ» կառուցվածքային ստորաբաժանման կազմում:
3. «Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ»:

8. Լսեցին. - ԵՊՀ մամուլի պատմության և տեսության և ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոններն անվանափոխելու մասին: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը, ներկայացնելով հարցը, մասնավորապես նշեց, որ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ամբիոնների առաջարկվող անվանափոխումները պայմանավորված են մասնագիտության մեջ վերջին շրջանում գրանցված նկատելի առաջընթացով, ինչն իր ազդեցությունն է թողել նաև ֆակուլտետում կազմակերպվող կրթական ծրագրերի բովանդակության վրա: Առաջարկվում է մամուլի պատմության և տեսության ամբիոնը վերանվանել «Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոն» և ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնը վերանվանել «Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոն»: Ըստ բանախոսի՝ այսպիսով ամբիոնների անվանափոխությունը զուգահեռվում է նաև նրանց առաքելությունների փոփոխության ու ընդլայնման հետ: Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի ուշադրության կենտրոնում պետք է լինեն թվանշային և սոցիալական մեդիայի գործունեության ոլորտներն ու սկզբունքները, իսկ տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնը պետք է զբաղվի ավանդական հմտությունների ուսուցման ավելի խորացված և համակարգված կազմակերպմամբ:

Հարցեր չհնչեցին:

Որոշեցին. -

1. «Երևանի պետական համալսարանի մամուլի պատմության և տեսության ամբիոն» և «Երևանի պետական համալսարանի ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները համապատասխանաբար վերանվանել «Երևանի պետական համալսարանի նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոն» և «Երևանի պետական համալսարանի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոն»:

9. Լսեցին. - ԵՊՀ սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը հակիրճ ներկայացրեց կանոնադրության հիմնադրույթները, նշելով որ այն քննարկվել է ԵՊՀ գիտական խորհրդի՝ ներքին իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կողմից:

Հարցեր չհնչեցին:

Ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել սահմանադրական տնտեսագիտության կենտրոնի՝ ներկայացվող կանոնադրությունը: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին. –

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կանոնադրությունը

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

26.12.2016թ.